ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի՛ տիկին Թովմասյան,

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ մասով և 145-րդ հոդվածի 2-րդ մասով, 3-րդ մասի 2-րդ կետով և 4.1-ին, 5.1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 28.03.2023թ.-ի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում թեկնածու է առաջադրվել Անահիտ Արտյոմի Մանասյանը:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից թեկնածուին իրավասու է ներկայացնել պատգամավոր Արթուր Հովհաննիսյանը:

Կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում թեկնածու առաջադրելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության որոշումը, ինչպես նաև տվյալ պաշտոնի համար Սահմանադրությամբ և օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

28.03.2023թ.

Մտից թ. 21/5782-23
«28» 03 2023
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ մասով և 145-րդ հոդվածի 2-րդ մասով, 3-րդ մասի 2-րդ կետով և 4.1-ին, 5.1- ին մասերով՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը որոշեց.

1. Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում թեկնածու առաջադրել Անահիտ Արտյոմի Մանասյանին:

2. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից թեկնածուին իրավասու է ներկայացնել պատգամավոր Արթուր Հովհաննիսյանը:

3. Սույն որոշումը, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

28.03.2023թ

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281